



ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԵՎ
ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ

Համեմատական վերլուծություն

ԵԽ թիվ (2008)6 Հանձնարարականի
և

ՀՀ Օրենսդրության և 2008 թ-ի նախագահական ընտրություններին հաջորդած արտակարգ իրավիճակի ընթացքում խոսքի ազատության, ինտերնետային կայքերի նկատմամբ կիրառված սահմանափակումների միջև հակասությունների և բացթողումների մասին

Մույն փաստաթղթի նպատակն է՝ Ինտերնետ ֆիլտրերի առումով խոսքի և տեղեկատվության ազատությունների պահպանմանը նպաստող միջոցների մասին Եվրոպայի խորհրդի (ԵԽ) Նախարարների կոմիտեի ԵԽ անդամ պետություններին ուղղված թիվ (2008)6 հանձնարարականի (Հանձնարարական) դրույթների և ՀՀ Օրենսդրության և 2008 թ-ի նախագահական ընտրություններին հաջորդած արտակարգ իրավիճակի ընթացքում խոսքի ազատության, ինտերնետային կայքերի նկատմամբ կիրառված սահմանափակումների միջև առավել էական և սկզբունքային նշանակություն ունեցող դրույթների համեմատական վերլուծությունը:

I. Անդրադարձ մարտ ամսվա արտակարգ դրության իրադարձություններին

1. Մարտի 1-ին, Երևանում տեղի ունեցած հայտնի իրադարձությունների պատճառով ՀՀ-ում սահմանադրական կարգին սպառնացող վտանգը կանխելու և բնակչության իրավունքներն ու օրինական շահերը պաշտպանելու նպատակով, ղեկավարվելով Սահմանադրության 55-րդ հոդվածի 14-րդ և 117-րդ հոդվածի 6-րդ կետերով, Հանրապետության Նախագահը որոշում էր կայացրել մարտի 1-ից 20-օրյա ժամկետով Երևան քաղաքում հայտարարել արտակարգ դրություն: Համաձայն այդ հրամանագրի 4-րդ մասի 4-րդ կետի. «զանգվածային լրատվության միջոցների կողմից պետական և ներքաղաքական հարցերի առնչությամբ հրապարակումները կարող են իրականացվել բացառապես պետական մարմինների պաշտոնական տեղեկատվության սահմաններում»:

2. Որպես հետևանք, մարտի 2-ի գիշերը ժամը 22:00-23:00 ընթացքում արգելափակվեցին որոշ ինտերնետային պարբերականներ՝ www.alplus.am, www.echannel.am, www.azatutyun.am, www.azatutyun.net, www.armenialiberty.am, www.persons.am, նաև www.armtoday.info, am.com և am.org. տիրույթներում գտնվող

«levonforpresident» կայքերը, www.youtube.com/a1plusnews.com, www.payqar.am, ինչպես նաև թերթերի ինտերնետ կայքեր՝ www.aravot.am, www.hzh.am, www.zhamanak.am, www.chi.am, www.taregir.am, www.lragir.am: Բացի այդ, դադարեցվեց «Ազատություն» ռադիոկայանի հեռարձակումը Հայաստանում և արգելափակվեցին «Ազատություն» ռադիոկայանի բոլոր կայքերը գտնվող eu, org ու այլ տիրույթներում: Լույս չտեսան «Առավոտ», «Հայկական ժամանակ», «168 ժամ», «Հրապարակ», «Տարեգիր», «4-րդ իշխանություն» և մի քանի այլ թերթեր: Ընդհանուր առմամբ արտակարգ դրության ընթացքում արգելափակվել էին ընդդիմադիր, տեղեկատվական թե Հայաստանյան, թե արտասահմանյան որոշ ինտերնետային պարբերականները:

3. Հարվածի տակ հայտնվեցին ոչ միայն հայկական բովանդակությամբ կայքերը, այլև, օրինակ, YouTube տեսանյութերի հանրային ցանցը, այն բանից հետո, երբ YouTube-ում հայտնվեց տեսանյութ, որտեղ ներկայացված էր Մարտի մեկյան բախումները իրավապահ մարմինների հետ: Մակայն, YouTube-ի դեպքում արգելափակումը երկար չտևեց: Առաջինը՝ իշխանությունների համար անցանկալի տեսահոլովակներն անմիջապես հայտնվեցին ուրիշ նմանատիպ կայքերի վրա, ինչը դարձրեց իրավիճակը անվերահսկելի: Երկրորդը՝ YouTube-ի երկարատև արգելափակումը շատ մեծ աղմուկ կարող էր առաջացնել աշխարհում¹: Նման կարճատև արգելափակման ենթարկվեց նաև ռուսական տեղեկատվական www.regnum.ru կայքը:

4. Ինտերնետային գրաքննությունն իրականացվում էր երկու ուղղությամբ: Նախ՝ Հայկական ինտերնետ ընկերակցությունը պարզապես սառեցրեց մի քանի դոմեյններ .am տիրույթում: Այսինքն, կայքերը հասանելի էին միայն իրենց համարներով (IP): Միայն մեկ շաբաթ անց ընկերակցությունը, ապօրինի գործողությունների պատճառով հայտնվելով միջազգային ճնշման տակ, տեղեկացրեց, որ այս քայլը պարտադրվել է Ազգային Անվտանգության Ծառայության (ԱԱԾ) կողմից և տեղադրեց հետևյալ հայտարարությունը. «Երբ 2008 թ. մարտի 1-ին արտակարգ դրություն հայտարարվեց, Հայաստանի Հանրապետության Ազգային Անվտանգության Ծառայությունը Հայաստանի ինտերնետ ընկերակցությանը խնդրեց ժամանակավոր սառեցնել որոշ դոմեյններ»: Դրանից հետո արդեն ճնշման տակ հայտնվեցին ինտերնետային կապի մատուցողները (պրովայդերները), որոնց Ազգային Անվտանգության Ծառայության կողմից կարգադրվեց արգելափակել ելքը դեպի «սև ցուցակում» հայտնված կայքերը:

5. Այնուհետև, մարտի 13-ին Հանրապետության Նախագահ Ռոբերտ Քոչարյանը փոփոխեց Արտակարգ դրության մասին հրամանագրի 4-րդ կետի 4-րդ ենթակետը, որը վերաձևակերպվեց հետևյալ կերպ. «արգելվում է զանգվածային լրատվության միջոցների կողմից պետական և ներքաղաքական հարցերի առնչությամբ ակնհայտ սուտ կամ իրավիճակը ապակայունացնող տեղեկատվություն կամ առանց իրազեկման (ապօրինի) միջոցառումների մասնակցության կոչեր, ինչպես նաև նման տեղեկատվություն կամ կոչեր որևէ այլ եղանակով և ձևով հրապարակելը կամ տարածելը»:

Ի վերջո, մարտի 21-ին, դադարել է Հանրապետության Նախագահի մարտի 1-ի հրամանագրով Երևանում սահմանված արտակարգ դրության իրավական ռեժիմը:

¹ Ըստ Սամվել Մարտիրոսյանի (kornelij.livejournal.com), http://www.echannel.am/?topic_id=1676

II. Դիտարկումներ Հանձնարարականի շուրջ

1. Նախ, հատկանշական ենք համարում հիշատակել Հանձնարարականի նախաբանի վերջին պարբերության պահանջը, ըստ որի առաջարկվում է անդամ երկրներին ինտերնետ ֆիլտրերի նկատմամբ ընդհանուր ստանդարտներ և ռազմավարություն ընդունել, նպաստելու Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների եվրոպական կոնվենցիայում տեղ գտած խոսքի և տեղեկատվության ազատության, ինչպես նաև հարակից իրավունքների ամբողջական կատարմանը և իրականացմանը, մասնավորապես՝

- ինտերնետ ֆիլտրերի հետ կապված միջոցներ ձեռնարկել՝ ըստ Հանձնարարականի հավելվածում տեղ գտած ուղեցույցերի.

- համապատասխան բոլոր մասնավոր և հանրային ոլորտների շահագրգիռ կողմերի ուշադրությանը ներկայացնել այս ուղեցույցերը, հատկապես այն կողմերին, որոնք նախագծում, օգտագործում (տեղադրում, ակտիվացնում, ապա-ակտիվացնում և իրականացնում) և մոնիտորինգի են ենթարկում ինտերնետ ֆիլտրերը, ինչպես նաև ներկայացնել քաղաքացիական հասարակության ուշադրությանը, որպեսզի վերջիններս հնարավորություն ունենան իրենց ներդրումն անելու դրանց իրականացման համար²:

2. Հանձնարարականը պարտադիր է համարում նախապես տեղյակ պահել ինտերնետ օգտագործողներին ինտերնետ էջերի արգելափակման կամ ֆիլտրացիայի որոշման մասին և եթե տեղին է, օգտագործողները իրավասու լինեն պարզելու և հսկելու ինտերնետի բովանդակության ֆիլտրացիայի աստիճանը:

Բացի այդ, ինտերնետից օգտվողների համար պետք է իրավական պաշտպանության մեխանիզմներ ստեղծվեն, ըստ որի վերջիններս հնարավորություն ունենան բողոքարկել պետական մարմինների կողմից ինտերնետ էջերի արգելափակման մասին որոշումները, ստանան պարզաբանումներ և փոխհատուցում³:

3. Անդամ պետությունները, համագործակցելով մասնավոր ոլորտի և քաղաքացիական հասարակության հետ, պետք է ապահովեն օգտագործողների տեղեկացված լինելը ակտիվացված ֆիլտրերի մասին, և եթե տեղին է, հնարավորություն ունենան ակտիվացնել և ապա-ակտիվացնել դրանք, ինչպես նաև օժանդակություն ստանան կիրառվող ֆիլտրացիայի աստիճանը փոփոխելիս: Անդամ պետությունները, մասնավորապես, պարտավոր են

- մշակել և առաջ քաշել օգտագործողների համար տեղեկատվության նվազագույն մակարդակ, որը հնարավորություն կընձեռի նրանց պարզելու, թե երբ է ֆիլտրացիան ակտիվացվել և հասկանալու, թե ինչպես և համաձայն ինչ չափորոշիչների է գործում ֆիլտրացիան, օրինակ՝ սև ցուցակ, սպիտակ ցուցակ, առանցքային բառերի արգելափակում, բովանդակության վարկանիշ և այլն, կամ վերջիններիս համակցություն,

² Հանձնարարականի վերջին պարբերություն.

³ Հանձնարարականի հավելվածի առաջին ուղեցույց, առաջին պարբերություն.

- տրամադրել պարզ և հստակ տեղեկատվություն և խորհրդատվություն այն մասին, թե ինչպես հաղթահարել ակտիվացրած ֆիլտրացիան, մասնավորապես, ում դիմել, երբ պարզվել է, որ բովանդակության արգելափակումը կատարվել է անհիմն, ինչպես նաև այն հիմքերը, որոնք թույլ կտան դադարեցնել որոշակի բովանդակության կամ URL-ի (Uniform Resource Locator) ֆիլտրացիան.

- ապահովել սխալմամբ կամ թյուրիմացությամբ ֆիլտրացիայի ենթարկված բովանդակության հասանելիությունը առանց չարդարացված դժվարությունների և ողջամիտ ժամանակի ընթացքում⁴:

4. Հանձնարարականի հավելվածը հատուկ կերպ մանրամասնում է ինտերնետ ֆիլտրերի օգտագործման և կիրառման որոշակի մոտեցումներ: Այսպես, ըստ հավելվածի երրորդ ուղեցույցի, նշելով ինտերնետի հանրային լայն արժեքը, բոլոր մակարդակներում հանրային հաստատությունները, ինչպիսիք են կառավարման մարմինները, գրադարանները և կրթական հիմնարկները, որոնք ներդնում կամ օգտագործում են ֆիլտրերը հանրությանը ծառայություններ մատուցելիս, պետք է ապահովեն բոլոր օգտագործողների խոսքի և տեղեկատվության ազատությունները, ինչպես նաև մասնավոր կյանքի և նամակագրության գաղտնիության իրավունքները:

Այս ենթատեքստում, անդամ երկրները պետք է՝

- ձեռնպահ մնան էլեկտրոնային հաղորդակցության ցանցերում ինտերնետ բովանդակության ֆիլտրացիայից, որոնք շահագործվում են հասարակական գործիչների կողմից, այն հիմքերով, որոնք մատնանշված չեն Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 10-րդ հոդվածի 2-րդ մասում, ինչպես որ մեկնաբանված է Մարդու իրավունքների եվրոպական դատարանի կողմից.
- երաշխավորել, որ ամբողջ երկրում ընդհանուր արգելափակման կամ ֆիլտրացիայի միջոցառումներն իրականացվեն միայն պետության կողմից, պայմանով, որ պահպանվեն Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 10-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջները: Նման միջոցառումը պետք է ձեռնարկվի միայն պետության կողմից, այն էլ առանձնահատուկ և հստակորեն սահմանված բովանդակության նկատմամբ, երբ բովանդակության անօրինականության վերաբերյալ որոշումն ընդունվել է իրավասու մարմնի կողմից, որը կարող է բողոքարկվել անկախ և անկողմնակալ դատարանում կամ կարգավորող մարմնում, համաձայն Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի.
- հանդես գալ, որտեղ տեղին է և անհրաժեշտ, օրենսդրական նախաձեռնությամբ՝ կանխարգելի համար քաղաքացիների օրինական ինտերնետ բովանդակության հասանելիությունը սահմանափակող ֆիլտրացիայի կանխամտածված չարաշահումը.
- ապահովել ֆիլտրերի նախնական և ընթացիկ ստուգումը՝ նպատակ ունենալով երաշխավորել ֆիլտրերի կիրառման հետևանքների համաչափությունը սահմանափակումների նպատակի նկատմամբ և այսպիսով խուսափելով բովանդակության չհիմնավորված արգելափակումից ժողովրդավարական հասարակությունում.

⁴ Հանձնարարականի հավելվածի առաջին ուղեցույց, երկրորդ պարբերություն.

- տրամադրել արդյունավետ և պատրաստակամ հասանելի հետպահանջի իրավունքի և իրավական պաշտպանության միջոցներ, ներառյալ ֆիլտրացիայի կասեցում, այն դեպքերում, երբ օգտագործողները և/կամ բովանդակության հեղինակները պնդում են, որ բովանդակությունը արգելափակվել է անհիմն⁵:

5. Այնուհանդերձ, անդամ երկրները և մասնավոր հատվածը խրախուսվում են՝

- պարբերաբար գնահատել և վերահսկել ֆիլտրերի կիրառման արդյունավետությունը և համաչափությունը.
- ամրապնդել տեղեկատվության և խորհրդատվության տրամադրումը օգտագործողներին, որոնք մասնավոր ցանցերում ենթակա են ֆիլտրացման, ներառյալ տեղեկատվություն ֆիլտրացիայի առկայության, վերջինիս պատճառների, կիրառման, ինչպես նաև ֆիլտրացիայի գործածման հիմք հանդիսացող չափորոշիչների մասին.
- համագործակցել օգտագործողների (սպառողներ, աշխատողներ և այլն) հետ՝ բարելավելու ֆիլտրացիայի թափանցիկությունը, արդյունավետությունը և համաչափությունը:

Այս ենթատեքստում, քաղաքացիական հասարակությունը պետք է քաջալերվի հետևելու գլխավոր թե պետական թե մասնավոր հատվածների կողմից ֆիլտրացիայի մշակմանը և կիրառմանը: Քաղաքացիական հասարակությունը, երբ տեղին է, պետք է կոչ անի անդամ պետությանը և մասնավոր հատվածին, համապատասխանաբար, ապահովելու և խթանելու բոլոր օգտագործողների ազատ արտահայտվելու և տեղեկատվության ազատության իրավունքը, մասնավորապես վերջիններիս տեղեկություններ ստանալու իրավունքը առանց իշխանությունների միջամտության և անկախ սահմաններից նոր տեղեկատվական և հաղորդակցության միջավայրում⁶:

6. Ի լրումն, հատկանշական է, որ համաձայն ԵԽ մարդու իրավունքները և օրենքի գերակայությունը տեղեկատվական հասարակությունում Հռչակագրի⁷,

- ազատ արտահայտվելու, տեղեկացված լինելու և հաղորդակցության ազատությունները պետք է հարգվեն, ինչպես թվային այնպես էլ ոչ թվային միջավայրում և չպետք է ենթարկվեն սահմանափակումների այն հիմքերով, որոնք մատնանշված չեն Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 10-րդ հոդվածի 2-րդ մասում, միայն այն պատճառով, որ հաղորդակցությունը կատարվում է թվային եղանակով.
- Անդամ երկրները պետք է պահպանեն և ուժեղացնեն իրավական և գործնական միջոցները կանխարգելու պետական և մասնավոր գրաքննությունը⁸;

⁵ Հանձնարարականի հավելվածի երրորդ ուղեցույց, առաջին պարբերություն.

⁶ Հանձնարարականի հավելվածի երրորդ ուղեցույց, երրորդ պարբերություն.

⁷ CM(2005)56 final 13 May 2005,

http://www.coe.int/t/e/integrated_projects/democracy/02_activities/00_declaration_on_information_society/

⁸ ԵԽ մարդու իրավունքները և օրենքի գերակայությունը տեղեկատվական հասարակությունում Հռչակագրի առաջին գլխի, առաջին մասի երկրորդ և չորրորդ պարբերություններ.

III. Եզրակացություն

Նախևառաջ, նշենք որ համաձայն ՀՀ Սահմանադրության 27-րդ հոդվածի, երաշխավորվում են խոսքի, մամուլի, տեղեկություն ստանալու, տարածելու քաղաքացիների ազատությունները, ինչպես նաև երաշխավորվում է լրատվամիջոցների և տեղեկատվական այլ միջոցների ազատությունը: Բացի այդ, Ձանգվածային լրատվության մասին ՀՀ օրենքի 4-րդ հոդվածը հստակ կերպով արգելում է գրաքննությունը և հոչակում ՁԼՄ-ների ազատությունը Հայաստանի Հանրապետությունում:

Ինտերնետային պարբերականների արգելափակման առնչությամբ Հայաստանի իշխանությունների կողմից պաշտոնական գնահատական կամ հայտարարություն չի հրապարակվել, հատկապես, թե ինչ չափորոշիչներով են առաջնորդվել ինտերնետային պարբերականներն արգելափակելիս, ինչպես են ընտրվել վերջիններս և ինչպիսի իրավական պաշտպանության հնարավորություններ գոյություն ունեն նման որոշումները բողոքարկելու և ով է պատասխանատու ինտերնետ պարբերականների արգելափակման համար: Միայն, կարելի է ենթադրել՝ ելնելով ՁԼՄ-ների մասին ՀՀ օրենքի մեկնաբանությունից, որ որոշ ինտերնետային տեղեկատվական պարբերականները ևս լրատվամիջոց են ու պարտավոր էին ենթարկվել արտակարգ դրության մասին հրամանագրին: Մյուս կողմից խնդրահարույց է արդյոք նման միջոցը համաչափ էր հրամանագրի նպատակների իրականացմանը, նամանավանդ, հայաստանյան տիրույթում գտնվող կայքերի նկատմամբ: Բացի դա, ուշադրություն ենք հրավիրում այն հանգամանքի վրա, որ արգելափակումներն անսպասելի էին և ապշեցրեցին ոչ միայն ՀՀ քաղաքացիներին, այլ նաև պարբերականների խմբագրություններին և հեղինակներին, որոնք նախօրոք չէին տեղեկացվել այդ որոշման մասին, նամանավանդ ինչ իրավասու մարմին է ընդունել այդ որոշումը և ով է պատասխանատու: Իր էությամբ, հակասական է նաև հասարակական գործիչների, ինչպիսիք են ընդդիմության գործիչները, ինտերնետային կայքերի արգելափակումը: Ավելին, վերոնշված ինտերնետային պարբերականներն ակնհայտորեն արգելափակվել էին գրաքննության արդյունքում:

Ըստ ՀՀ Սահմանադրության 43-րդ հոդվածի՝ ՁԼՄ-ների ազատությունն ամրագրած 27-րդ հոդվածի դրույթները, հիմնական իրավունքները և ազատությունները կարող են սահմանափակվել միայն օրենքով, եթե դա անհրաժեշտ է ժողովրդավարական հասարակությունում պետական անվտանգության, հասարակական կարգի պահպանման, հանցագործությունների կանխման, հանրության առողջության ու բարոյականության, այլոց սահմանադրական իրավունքների և ազատությունների, պատվի և բարի համբավի պաշտպանության համար: Ի հակադրում, ՀՀ Սահմանադրության 117-րդ հոդվածի 6-րդ կետը պարզաբանում է, որ մինչև արտակարգ դրության իրավական ռեժիմի սահմանում օրենքով, սահմանադրական կարգին սպառնացող անմիջական վտանգի դեպքում, Հանրապետության Նախագահը, խորհրդակցելով Ազգային ժողովի նախագահի և վարչապետի հետ, իրականացնում է *իրավիճակից թելադրվող միջոցառումներ* և այդ մասին ուղերձով դիմում ժողովրդին: Այս ենթատեքստում, արդյոք «իրավիճակից թելադրվող միջոցառումներ» կարելի է համարել ՁԼՄ-ների ազատության սահմանափակումը, ի հակադրումն նույն Սահմանադրության

43-րդ հոդվածի: Մեր կարծիքով, նման մեկնաբանությունը հակասում է ՀՀ Սահմանադրության ոգուն և չի բխում միջազգային իրավական ակտերի, մասնավորապես՝ Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների կոնվենցիայի 10-րդ հոդվածի, նպատակներից:

Ելնելով վերոշարադրյալից, մեր կարծիքն այն է, որ Հայաստանի Հանրապետությունը ոչ միայն հետամուտ չի եղել Հանձնարարականով ամրագրված սկզբունքներին, այլև արհամարհել է ինտերնետային լրատվության ազատության առանձնահատկություններն ու արդի կյանքում դրա դերի կարևորությունը:

Մովսես Հակոբյան
Իրավաբան